ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Քրիստիննե Գրիգորյանի՝ Բելգիայի Թագավորություն (Բրյուսել) գործուղման արդյունքների վերաբերյալ

Գործուղված պաշտոնատար անձ՝ Քրիստիննե Գրիգորյան:

Գործուղված անձի զբաղեցրած պաշտոնը՝ ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ:

Գործուղման վայրը և ժամկետները՝ Բելգիայի Թագավորություն (Բրյուսել), 2019թ. դեկտեմբերի 15-ից 17-ը:

Հրավիրող կողմը՝ Եվրոպական միություն:

Գործուղման նպատակը՝ Մասնակցություն ՀՀ-ԵՄ Գործընկերության կոմիտեի 2-րդ հանդիպմանը:

Քննարկված թեմաները՝ Հանիդպման ընթացքում քննարկվել են ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի կատարման ընթացքին, ինչպես նաև տնտեսական զարգացման, անվտանգության, Արևելյան գործընկերության և տարածաշրջանային զարգացումներին առնչվող հարցեր:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝ ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Քրիստիննե Գրիգորյանը 2019թ. դեկտեմբերի 16-ին Բելգիայի Թագավորությունում (Բրյուսել) ՀՀ արտաքին գործերի նախարար Ավետ Ադոնցի գլխավորած պատվիրակության կազմում մասնակցել է ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (ՀԸԳՀ) ներքո ստեղծված ՀՀ-ԵՄ Գործընկերության կոմիտեի 2-րդ հանդիպմանը: Հարկ է նշել, որ Եվրամիության պատվիրակությունը գլխավորում էր արտաքին գործողության եվրոպական ծառայության Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի գծով գլխավոր տնօրենի տեղակալ Լյուկ Դևինը:

ՀՀ-ԵՄ ՀԸԳՀ ներքո ստեղծված ՀՀ-ԵՄ Գործընկերության կոմիտեի 2-րդ հանդիպման ընթացքում քննարկվել են ՀԸԳՀ-ի կատարման ընթացքին, այդ թվում՝

տրանսպորտի, էներգետիկայի և շրջակա միջավայրի բնագավառներում, ինչպես նաև տնտեսական զարգացման, անվտանգության, Արևելյան գործընկերության և տարածաշրջանային զարգացումներին առնչվող հարցեր:

Հանդիպման ընթացքում երկուստեք ընդգծվեց ՀԸԳՀ-ի կարևորությունը ՀՀ կառավարության հավակնոտ և երկարաժամկետ ռազմավարական տեսլականին համահունչ բարեփոխումների իրականացման, ինչպես նաև ԵՄ անդամ պետությունների հետ համագործակցության խորացման համատեքստում:

ՀՀ-ԵՄ Գործընկերության կոմիտեի 2-րդ հանդիպմանը ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Քրիստիննե Գրիգորյանը հանդես է եկել ելույթով: Իր ելույթում ՀՀ արդարադատության նախարարի տեղակալը եվրոպական կողմին ներկայացրել է արդարադատության ոլորտում իրականացվող բարեփոխումները: Մասնավորապես, ՀՀ արդարադատության նախարարի տեղակալը տեղեկացրել է, որ վերջին 3 ամիսների ընթացքում ՀՀ կառավարության կողմից հաստատվել են ՀՀ արդարադատության նախարարության իրավասությանն առնչվող ոլորտային 3 ռազմավարություններ և դրանցից բխող գործողությունների ծրագրեր, որոնք վերաբերում են դատաիրավական բարեփոխումներին, կոռուպցիայի դեմ պայքարին, քրեակատարողական և պրոբացիայի ոլորտների բարեփոխումներին: Միաժամանակ ՀՀ արդարադատության նախարարի տեղակալը ԵՄ գործընկերներին հայտնել է, որ ՀՀ վարչապետի աշխատակազմում է գտնվում նաև Մարդու իրավունքների պաշտպանության ազգային նոր ռազմավարությունը և դրանից բխող 2020-2022թթ. Գործողությունների ծրագիրը, որը ևս կհաստատվի մինչև այս տարվա ավարտը:

Իր ելույթում ՀՀ արդարադատության նախարարի տեղակալը ներկայացրել է նաև ոստիկանության բարեփոխումների մասով նախատեսվող քայլերի հաջորդականությունը, մասնավորապես կարևորելով համապատասխան աշխատանքային խմբի ստեղծումը և ԵՄ փորձագետների ներգրավման անհրաժեշտությունը: Ք. Գրիգորյանը առանձնահատուկ ընդգծել է ոստիկանության առկա իրավիճակի վերաբերյալ Թայեքս գնահատման առաքելության զեկույցի

կարևորությունը: Ներկայացնելով ոլորտի բարեփոխումների վերաբերյալ ՀՀ կառավարության տեսլականը՝ նախարարի տեղակալը կարևորել է այն հանգամանքը, որ ոստիկանության բարեփոխումներն ընթանում են քրեական արդարադատության բարեփոխումներին զուգահեռ:

Եվրոպական միությունն իր գոհունակությունն է հայտնել մինչ այժմ Հայաստանի կողմից բարեփոխումների օրակարգի իրականացման առաջընթացի կապակցությամբ, մասնավորապես դատական և հակակոռուպցիոն նոր ռազմավարությունների ուղղությամբ: Միևնույն ժամանակ որպես Հայաստանի և Եվրամիության միջև առկա հաջողված համագործակցության ուղղություն առանձնացվել է ՀՀ-ԵՄ արդարադատության երկխոսության ձևաչափը: ԵՄ կողմն ընդգծել է նաև Հայաստանի կողմից որդեգրված բարեփոխումների շարունակականության կարևորությունը, այդ թվում՝ մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում: Եվրոպացի գործընկերների կողմից կարևորվեց նաև բարեփոխումների համապատասխանությունը իրավունքի գերակայության հիմնական սկզբունքներին և բոլոր շահագրգիռ կողմերի, ներառյալ՝ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ սերտ համագործակցությունը:

Անհրաժեշտ է նաև նշել, որ որպես Հայաստանի բարեփոխումների առանցքային գործընկեր՝ հանդիպման ընթացքում ԵՄ-ն վերահաստատեց իր պատրաստակամությունը տրամադրելու անհրաժեշտ փորձագիտական և ֆինանսական հետագա աջակցություն բարեփոխումների մշակման և իրականացման, ինչպես նաև ՀՀ օրենսդրության՝ ԵՄ չափանիշներին մոտարկման ուղղությամբ կառավարության կարողությունների ուժեղացման համար:

ՀՀ-ԵՄ Գործընկերության կոմիտեի 2-րդ հանդիպման արդյունքներով ընդունվել է Գործառնական եզրակացությունների ամփոփիչ փաստաթուղթ, որտեղ տեղ են գտել մինչև հաջորդ տարի կայանալիք Գործընկերության կոմիտեի 3-րդ հանդիպմանը ծրագրվող հիմնական գործողությունները:

ՀՀ-ԵՄ Գործընկերության կոմիտեի նիստից անմիջապես հետո ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Ք. Գրիգորյանը երկկողմ հանդիպումներ է ունեցել Եվրոպական հանձնաժողովի հարևանության և ընդլայնման բանակցությունների, ինչպես նաև արդարադատության, սպառողների և գենդերային հավասարության հարցերով գլխավոր տնօրինության ներկայացուցիչների հետ: Վերջիններիս հետ քննարկվել են արդարադատության ոլորտի բյուջետային աջակցության համաձայնագրի նախապատրաստական փաստաթղթի և հաջորդող քայլերի վերաբերյալ հիմնահարցերը:

ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ

12/18/2019

X

Kristinne Grigoryan

Քրիստիննե Գրիգորյան

18.12.2019թ.